Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե

Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II – փուլ 3

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվություն	8
Ծախսերի մասին հաշվետվություն	9
Ծրագրի հաշվի հաշվետվություն (KfW վարկ)	10
Ծրագրի անհատական հաշվի հաշվետվություն (KfW վարկ)	11
Ծրագրի անհատական հաշվի հաշվետվություն (ԵՆԲ)	13
Ծրագրի հաշվի հաշվետվություն (ՀՆԾ վարկ)	14
Ծրագրի անհատական հաշվի հաշվետվություն (ՀՆԾ վարկ)	15
Կառավարության համաֆինանսավորման (ՀՀ դրամ) հաշվի հաշվետվություն (KfW վարկ)	16
Կառավարության համաֆինանսավորման (ՀՀ դրամ) հաշվի հաշվետվություն (KfW վարկ)	17
Կառավարության համաֆինանսավորման (ՀՀ դրամ) հաշվի հաշվետվություն (ԵՄ-ՀՆԾ)	18
Կառավարության համաֆինանսավորման (ՀՀ դրամ) հաշվի հաշվետվություն (ԵՆԲ)	19
Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	20

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի (ՋԿ) ղեկավարության պատասխանատվությամբ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացված և KfW Frankfurt am Main, KfW-ի (KfW) Վարկային և Ծրագրի համաձայնագրի, Եվրոպական Խորհրդի ԵՄ Հարևանության ներդրումային ծրագրի (ՀՆԾ) կողմից ներկայացված Եվրոպական Միության (ԵՄ) ֆինանսական համաձայնագրի և Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) ֆինանսական պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II – փուլ 3» ծրագրի (Ծրագիր) հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունը, ծախսերի մասին հաշվետվությունը, Ծրագրի հաշվի հաշվետվությունները, Ծրագրի անհատական հաշվի հաշվետվությունները և կառավարության համաֆինանսավորման հաշվի հաշվետվությունները, ինչպես նաև հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Մեր կարծիքով, հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ KfW Վարկային և Ծրագրի համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II – փուլ 3» ծրագրի դրամական միջոցների մնացորդը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ընթացքում ստացված և վճարված դրամական միջոցները՝ համաձայն հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ում ներկայացված հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքի, և բոլոր էական առումներով վճարումները կատարվել են՝ համաձայն 2013թ. դեկտեմբերի 27-ին կնքված և հետագայում փոփոխված Վարկային և Ծրագրի համաձայնագրի և 2015թ. հոկտեմբերի 28-ին կնքված և հետագայում փոփոխված համապատասխան Առանձնացված Համաձայնագրի պայմանների, ինչպես նաև KfW-ի՝ Փոխհատուցման ընթացակարգով կատարվող վճարումների Լրացուցիչ դրույթների:

Մեր կարծիքով, ներկայացված ծախսերի մասին հաշվետվությունը հաստատվում է անհրաժեշտ և բավարար ապացույցներով և այն կարելի է օգտագործել որպես հիմնավորում՝ KfW BMZ 2013.6634.3 դրամական միջոցների ստացման դիմումների համար:

Ի հավելումն, մեր կարծիքով.

ա) Վճարումները կատարվել են՝ համաձայն 2013թ. դեկտեմբերի 27-ին կնքված և հետագայում փոփոխված Վարկային և Ծրագրի համաձայնագրի և 2015թ. հոկտեմբերի 28-ին կնքված և հետագայում փոփոխված համապատասխան Առանձնացված Համաձայնագրի պայմանների: Անընդունելի ծախսեր չեն հայտնաբերվել:

բ) Հաշվապահական հաշվառման փաստաթղթերը պահպանվել են՝ համաձայն 2013թ. դեկտեմբերի 27-ին կնքված և հետագայում փոփոխված Վարկային և Ծրագրի համաձայնագրի և 2015թ. հոկտեմբերի 28-ին կնքված և հետագայում փոփոխված համապատասխան Առանձնացված Համաձայնագրի պայմանների:

գ) Ծախսերը հիմնավորվում են անհրաժեշտ և բավարար ապացույցներով: Ծախսերի մասին հաշվետվության հետ կապված բոլոր անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը և գրանցումները, որոնք ներկայացվել են՝ որպես դրամական միջոցների ստացման դիմումների հիմք, հասանելի են եղել:

դ) Աուդիտի ենթարկված ծախսերի մասին հաշվետվությունը դրամական միջոցների ստացման դիմումները հիմնավորելու տեսանկյունից վստահելի է: Առկա է հստակ կապ ծախսերի մասին հաշվետվության, KfW ներկայացված դրամական միջոցների ստացման դիմումների և հաշվապահական հաշվառման գրանցումների միջև:

ե) 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Վարկային և Ծրագրի համաձայնագրի և համապատասխան Առանձնացված Համաձայնագրի շրջանակներում ապրանքներ ձեռք չեն բերվել: Մատուցված ծառայությունները ներառում են խորհրդատվական ծառայություններ և շինարարական աշխատանքներ, որոնք ֆինանսավորվել և ձեռք են բերվել համապատասխանաբար՝ համաձայն 2013թ. դեկտեմբերի 27-ին կնքված և հետագայում փոփոխված Վարկային և Ծրագրի համաձայնագրի և 2015թ. հոկտեմբերի 28-ին կնքված և հետագայում փոփոխված համապատասխան Առանձնացված Համաձայնագրի:

զ) Ծրագրի շրջանակներում սահմանված ներքին վերահսկողության համակարգում որևէ հատուկ թերություններ չեն հայտնաբերվել:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք ՋԿ-ից և ՀՏՋՀ-ից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Մենք ուշադրություն ենք հրավիրում հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի վրա, որտեղ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու ՀՏԶՀ-ի ղեկավարությանը՝ KfW-ի Վարկային և Ծրագրի համաձայնագրի, ԵՄ ՀՆԾ ֆինանսական համաձայնագրի և ԵՆԲ ֆինանսական պայմանագրում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության պատասխանատվությունը հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար

ՀՏԶՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է սույն հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքի, 2013թ. դեկտեմբերի 27-ին կնքված և հետագայում փոփոխված Վարկային և Ծրագրի համաձայնագրի և 2015թ. հոկտեմբերի 28-ին կնքված և հետագայում փոփոխված համապատասխան Առանձնացված Համաձայնագրի համապատասխան պայմանների, ինչպես նաև ԵՄ ՀՆԾ ֆինանսական համաձայնագրի և ԵՆԲ ֆինանսական պայմանագրի համապատասխան դրույթների համաձայն պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ծրագրի անընդհատությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ծրագրի անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Grant Thornton

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ծրագրի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ծրագրի անընդհատության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են պատճառ հանդիսանալ Ծրագրի դադարեցման:
- Գնահատում ենք հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Grant Thornton

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

28 մարտի 2024թ.

Ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարի

Եվրո	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստացված դրամական միջոցներ	4		
Դրամական միջոցների համալրումներ KfW-ից		4,455,510	19,992,437
Դրամական միջոցների համալրումներ ԵՄ-ՀՆԾ-ից, զուտ		-	482,647
Դրամական միջոցների համալրումներ ԵՆԲ-ից		-	8,600,000
Կառավարության համաֆինանսավորում		1,879,803	5,172,161
Ընդամենը ստացված/(վերադարձված) դրամական միջոցներ, զուտ		6,335,313	34,247,245
Վճարված դրամական միջոցներ	5		
Վճարված դրամական միջոցներ KfW-ի աղբյուրներից		(5,524,882)	(16,001,680)
Վճարված դրամական միջոցներ ԵՆԲ աղբյուրներից		(1,228,248)	(8,600,000)
Վճարված դրամական միջոցներ ԵՄ-ՀՆԾ աղբյուրներից		(25,842)	(291,560)
Վճարված դրամական միջոցներ համաֆինանսավորման աղբյուրներից		(1,867,399)	(5,284,023)
Բանկային փոխանցումների վճարներ		-	(567)
Ընդամենը վճարված դրամական միջոցներ		(8,646,371)	(30,177,830)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		(12,404)	111,862
Դրամական միջոցների զուտ աճ/(նվազում)		(2,323,462)	4,181,277

		2023
Դրամական միջոցներ տարվա սկզբում	3	6,504,739
Դրամական միջոցների զուտ նվազում		(2,323,462)
Դրամական միջոցներ տարվա վերջում	3	4,181,277

Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. մարտի 28-ին՝

Սարգիս Բաղինյան
Գործադիր տնօրեն

Կարինե Շահբազյան
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման բաժնի պետ (ՀՏՋՀ)

Վահագն Գևորգյան
Կոմիտեի նախագահ

Քնարիկ Աղվանյան
ՋԿ Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ

Ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 19-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծախսերի մասին հաշվետվություն

Եվրո Կատեգորիա	Ծախսեր	
	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
KfW վարկ		
Խորհրդատվական ծառայություններ	532,931	3,823,354
Շինարարական աշխատանքներ	4,991,951	12,178,326
ԵՄ-ՀՆԾ դրամաշնորհ		
Խորհրդատվական ծառայություններ	25,842	291,560
ԵՆԲ վարկ		
Խորհրդատվական ծառայություններ	582,664	1,854,599
Շինարարական աշխատանքներ	645,584	6,745,401
Համաֆինանսավորում		
Խորհրդատվական ծառայություններ	229,532	1,189,600
Շինարարական աշխատանքներ	1,637,867	4,094,423
Բանկային փոխանցումների վճարներ	-	567
Ընդամենը ծախսեր	8,646,371	30,177,830

Ծախսերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 19-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի հաշվի հաշվետվություն (KfW վարկ)

Հաշվարկային հաշվի համար՝ 900000902370
Բանկ՝ Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարան
Հասցե՝ Երևան 0010, Մելիք-Ադամյան 1
Արժույթ՝ Եվրո
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարի

Մնացորդ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	4,993,535
Ավելացնել՝	
KfW-ի վարկի ֆինանսավորում	4,455,510
Ընդամենը մուտքեր	4,455,510
Նվազեցնել՝	
Տեղափոխում ծրագրի անհատական հաշիվ	(5,650,397)
Ընդամենը ելքեր	(5,650,397)
Մնացորդ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,798,648

Ծրագրի հաշվի հաշվետվությունը պետք է ընթերցվի հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 19-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի անհատական հաշվի հաշվետվություն (KfW վարկ)

Հաշվարկային հաշվի համար՝ 900000902974
Բանկ՝ Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարան
Հասցե՝ Երևան 0010, Մելիք-Ադամյան 1
Արժույթ՝ Եվրո
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարի

Մնացորդ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	66,179
Ավելացնել՝	
Տեղափոխում Ծրագրի հաշվից	5,650,397
Ընդամենը մուտքեր	5,650,397
Նվազեցնել՝	
Ծրագրային ծախսեր	(5,524,882)
Ընդամենը ելքեր	(5,524,882)
Մնացորդ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	191,694

Ծրագրի անհատական հաշվի հաշվետվությունը պետք է ընթերցվի հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 19-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի անհատական հաշվի հաշվետվություն (ԵՆԲ վարկ)

Հաշվարկային հաշվի համար՝ 900000903006
Բանկ՝ Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարան
Հասցե՝ Երևան 0010, Մելիք-Ադամյան 1
Արժույթ՝ Եվրո
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարի

Մնացորդ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	1,228.2
Ավելացնել՝	
Տեղափոխում Ծրագրի հաշվից	
Ընդամենը մուտքեր	
Նվազեցնել՝	
Ծրագրային ծախսեր	(1,228.2
Ընդամենը ելքեր	(1,228.2
Մնացորդ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	

Ծրագրի անհատական հաշվի հաշվետվությունը պետք է ընթերցվի հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 19-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի հաշվի հաշվետվություն (ՀՆԾ վարկ)

Հաշվարկային հաշվի համար՝ 900000902396
Բանկ՝ Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարան
Հասցե՝ Երևան 0010, Մելիք-Ադամյան 1
Արժույթ՝ Եվրո
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարի

Մնացորդ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	216,776
Ավելացնել՝	
ՀՆԾ-ի վարկի ֆինանսավորում	-
Ընդամենը մուտքեր	-
Նվազեցնել՝	
Տեղափոխում Ծրագրի անհատական հաշիվ	(25,842)
Ընդամենը ելքեր	(25,842)
Մնացորդ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	190,934

Ծրագրի հաշվի հաշվետվությունը պետք է ընթերցվի հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 19-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի անհատական հաշվի հաշվետվություն (ՀՆԾ վարկ)

Հաշվարկային հաշվի համար՝ 900000903592
Բանկ՝ Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարան
Հասցե՝ Երևան 0010, Մելիք-Ադամյան 1
Արժույթ՝ Եվրո
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարի

Մնացորդ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	1
Ավելացնել՝	25,842
ՀՆԾ-ի վարկի ֆինանսավորում	25,842
Ընդամենը մուտքեր	
Նվազեցնել՝	(25,842)
Ծրագրային ծախսեր	(25,842)
Ընդամենը ելքեր	
Մնացորդ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1

Ծրագրի անհատական հաշվի հաշվետվությունը պետք է ընթերցվի հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 19-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Կառավարության համաֆինանսավորման (ՀՀ դրամ) հաշվի հաշվետվություն (KfW վարկ)

Հաշվարկային հաշվի համար՝ 900000902982
Բանկ՝ Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարան
Հասցե՝ Երևան 0010, Մելիք-Ադամյան 1
Արժույթ՝ ՀՀ դրամ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարի

Մնացորդ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-
Ավելացնել՝	
Կառավարության համաֆինանսավորում	1,590,819
ՀՀ պետական բյուջե վերադարձված գումար	(4,709)
Ընդամենը մուտքեր	1,586,110
Փոխարժեքային տարբերություն	(12,489)
Նվազեցնել՝	
Ծրագրային ծախսեր	(1,573,621)
Ընդամենը ելքեր	(1,573,621)
Մնացորդ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-

Կառավարության համաֆինանսավորման հաշվի հաշվետվությունը պետք է ընթերցվի հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 19-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Կառավարության համաֆինանսավորման (ՀՀ դրամ) հաշվի հաշվետվություն (KfW վարկ)

Հաշվարկային հաշվի համար՝ 900000908401
Բանկ՝ Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարան
Հասցե՝ Երևան 0010, Մելիք-Ադամյան 1
Արժույթ՝ ՀՀ դրամ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարի

Մնացորդ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	
Ավելացնել՝	
Կառավարության համաֆինանսավորում	1,
Ընդամենը մուտքեր	1,
Փոխարժեքային տարբերություն	
Նվազեցնել՝	
Ծրագրային ծախսեր	(1,
Ընդամենը ելքեր	(1,
Մնացորդ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	

Կառավարության համաֆինանսավորման հաշվի հաշվետվությունը պետք է ընթերցվի հատուկ նպատակների ծրա
ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 19-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից
ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Կառավարության համաֆինանսավորման (ՀՀ դրամ) հաշվի հաշվետվություն (ԵՄ-ՀՆԾ)

Հաշվարկային հաշվի համար՝ 900000903600
Բանկ՝ Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարան
Հասցե՝ Երևան 0010, Մելիք-Ադամյան 1
Արժույթ՝ ՀՀ դրամ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարի

Մնացորդ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-
Ավելացնել՝	
Կառավարության համաֆինանսավորում	45,074
ՀՀ պետական բյուջե վերադարձված գումար	(38,309)
Ընդամենը մուտքեր	6,765
Փոխարժեքային տարբերություն	(1,629)
Նվազեցնել՝	
Ծրագրային ծախսեր	(5,136)
Ընդամենը ելքեր	(5,136)
Մնացորդ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-

Կառավարության համաֆինանսավորման հաշվի հաշվետվությունը պետք է ընթերցվի հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 19-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Կառավարության համաֆինանսավորման (ՀՀ դրամ) հաշվի հաշվետվություն (ԵՆԲ)

Հաշվարկային հաշվի համար՝ 900000903584
Բանկ՝ Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարան
Հասցե՝ Երևան 0010, Մելիք-Ադամյան 1
Արժույթ՝ ՀՀ դրամ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարի

Մնացորդ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-
Ավելացնել՝	
Կառավարության համաֆինանսավորում	288,246
ՀՀ պետական բյուջե վերադարձված գումար	(2,908)
Ընդամենը մուտքեր	285,338
Փոխարժեքային տարբերություն	1,693
Նվազեցնել՝	
Ծրագրային ծախսեր	(287,031)
Ընդամենը ելքեր	(287,031)
Մնացորդ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-

Կառավարության համաֆինանսավորման հաշվի հաշվետվությունը պետք է ընթերցվի հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 19-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II – փուլ 3» ծրագրի (Ծրագիր) շրջանակներում Հայաստանի հանրապետությունը (ՀՀ) վարկ է ստացել KfW, Frankfurt am Main-ից (KfW): Վարկային և Ծրագրի համաձայնագիրը ստորագրվել է 2013թ. դեկտեմբերի 27-ին և փոփոխվել է 2018թ. հունիսի 20-ին՝ մի կողմից KfW-ն, և մյուս կողմից ՀՀ-ն, որը ներկայացնում է ՀՀ Ֆինանսների նախարարությունը, ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն (ՋՏՊԿ) և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն, «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն, «Նոր Ակունք» ՓԲԸ-ն և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն (յուրաքանչյուրը ներկայացված ՋՏՊԿ կողմից Ծրագրի իրականացման նպատակով): Ֆինանսավորման ընդհանուր գումարը կազմել է 30,000,000 եվրո: Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական Միության (ԵՄ) կողմից, որի ներկայացուցիչներն են Եվրոպական Խորհրդի ԵՄ Հարևանության ներդրումային ծրագիրը (ԵՄ-ՀՆԾ) և Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ):

Հայաստանի Հանրապետության (ներկայացված ՀՀ Ֆինանսների նախարարության և ՋՏՊԿ-ի կողմից) և ԵՄ միջև Իրականացման ֆինանսավորման համաձայնագիրը ստորագրվել է 2014թ. մայիսի 14-ին: Դրամաշնորհի ընդհանուր գումարը կազմել է 15,000,000 եվրո:

Հայաստանի Հանրապետության (ներկայացված ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից) և ԵՆԲ միջև Ֆինանսավորման պայմանագիրը ստորագրվել է 2014թ. հունիսի 27-ին: Վարկի ընդհանուր գումարը կազմել է 25,500,000 եվրո:

Ծրագիրն իրականացվում է համաձայն 2013թ. դեկտեմբերի 27-ին կնքված, 2018թ. հունիսի 20-ին և 2020թ. մայիսի 12-ին փոփոխված Վարկային համաձայնագրի և Ծրագրի Առանձնացված համաձայնագրի, որը կնքվել է 2015թ. հոկտեմբերի 28-ին և փոփոխվել 2016թ. մարտի 23-ին, 2018թ. հուլիսի 23-ին և 2020թ. օգոստոսի 28-ին:

Մինչև 2016թ. դեկտեմբերը Ծրագիրն իրականացվել է չորս շրջանային Ջրմուղկոյուղիների կողմից՝ «Շիրակ» ՓԲԸ, «Լոռի» ՓԲԸ, «Նոր Ակունք» ՓԲԸ և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ՝ որպես Ծրագրի իրականացման գործակալություններ (ԾԻԳ): 2016թ.-ին նորաստեղծ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ կնքվել է վարձակալության պայմանագիր՝ չորս շրջանային փակ բաժնետիրական ընկերությունների, ինչպես նաև «Երևան Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքներում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման նպատակով: 2017թ. հունվարից սկսած՝ վարձակալը՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն, պատասխանատու է ջրային և կոյուղու ենթակառուցվածքների կառավարման, գործարկման և պահպանման համար: ՀՀ Կառավարության 2017թ. փետրվարի 23-ի թիվ N191-A որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետությանն օտարերկրյա պետությունների և միջազգային դոնորների կողմից տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի (ՋՏՊԿ համակարգում իրականացվող) իրականացման հետագա պատասխանատվությունը հանձնվել է «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին (ՋՏԾԻԳ): ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 28-ին թվագրված թիվ 170-Ն որոշման և դրա փոփոխության համաձայն՝ 2019թ. դեկտեմբերի 30-ից դադարեցվել է ՋՏՊԿ «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՋՏԾԻԳ)

գործունեությունը: Որոշվել է, որ ՋՏԾԻԳ-ի գործառույթները շարունակվելու է իրականացվել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից ջրային տնտեսության ծրագրերի իրականացման համար:

Համաձայն KFW-ի 2023թ. օգոստոսի 17-ին թվագրված նամակի, վարկային միջոցների մասհանման վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը:

Համաձայն Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) 2023թ. նոյեմբերի 2-ին թվագրված նամակի, վարկային միջոցների հասանելիության վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը:

Ծրագրի նպատակն է Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնումը և կառուցումը, «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի, «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի, «Նոր Ակունք» ՓԲԸ-ի և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքներում, ներառյալ՝ խորհրդատվական ծառայությունների տրամադրումը: Ծրագիրը վերաբերում է ջրամատակարարման համակարգի վերականգնմանն ու ընդլայնմանը, նախկին շրջանային Ջրային տնտեսությունների՝ «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի, «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի, «Նոր Ակունք» ՓԲԸ-ի և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ծառայության տարածքներում ջրահեռացման համակարգերի որոշ անհետաձգելի միջոցների կիրառմանը, ինչպես նաև Արմավիրում կոյուղաջրերի մաքրման կայանին: Ծրագրում ընդգրկված է նաև Համայնքային ենթակառուցվածքների ծրագրի երրորդ փուլը, որի նպատակն է ապահովել բնակչությանը շարունակական, շաբաթվա բոլոր օրերին և 24 ժամ մաքուր ջրամատակարարմամբ և դրանով իսկ բարելավել բնակչության կենսամակարդակն ու առողջությունը: Ծրագրի նպատակն է Ծրագրի տարածաշրջանում բնակվող բնակչության ջրամատակարարման որակական և քանակական բարելավումը: Բացի այդ Ծրագիրը նախատեսում է ներդրումներ շրջակա գյուղերի համար: Սա կնպաստի Ծրագրի տարածաշրջանում համայնքների կայուն և էկոլոգիական զարգացմանը, ինչպես նաև շրջակա միջավայրի վիճակի բարելավմանը, տարածաշրջանային ջրային ռեսուրսների կայուն և էկոլոգիապես մաքուր կառավարմանն ու բնակչության առողջական վիճակի վրա բացասական ազդեցությունների նվազեցմանը:

Ծրագրի հետևյալ աշխատանքները կֆինանսավորվեն Վարկից.

- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցում և վերականգնում, այդ թվում՝ Ծրագրի շրջաններում ենթակառուցվածքների հասանելիություն բնակելի տների համար,
- շահագործման և սպասարկման սարքավորումների ձեռքբերում,
- խորհրդատվական ծառայություններ՝ նախագծային աշխատանքների համար, ներառյալ՝ բոլոր անհրաժեշտ ծառայությունները՝ համաձայն 1.2 հոդվածի (բնապահպանական, սոցիալական, առողջապահական և անվտանգության համապատասխանություն)՝ մրցույթ և վերահսկողություն,
- Ծրագրի հաշվետվությունների տեխնիկական և ֆինանսական մոնիտորինգի խորհրդատվական ծառայություններ:

ԵՄ-ՀՆԾ-ն Ծրագրի համար կտրամադրի 15 միլիոն եվրոյի ներդրումային դրամաշնորհ: Հետևյալ միջոցները կֆինանսավորվեն ԵՄ-ՀՆԾ ներդրումից, որը ղեկավարվում է KfW-ի կողմից:

- ԵՄ և միջազգային չափանիշներին համապատասխան կոյուղաջրերի մաքրման կայանի կառուցում Արմավիրում,
- 560 գյուղերում փորձնական նախագծեր, որոնք նախկինում չեն փոխանցվել նախկին Ջրային տնտեսություններին և վարձակալին միջոցառումները կսահմանվեն «Ջրային

տնտեսությունների սպասարկման տարածքներից դուրս գտնվող ջրի և սանիտարական համակարգերի բարելավում և զարգացում» ուսումնասիրության շրջանակներում:

Ծրագրի ընդհանուր ներդրումային ծախսերը կազմում են մոտավորապես 62.7 մլն եվրո (առանց ԱԱՀ-ի և այլ պետական վճարների, ինչպես նաև շինարարության ընթացքում անհրաժեշտ հողի ձեռքբերման և տոկոսային ծախսի), և ֆինանսավորումը նախատեսվում է կատարել հետևյալ կերպ.

KfW վարկ մինչև	30 մլն եվրո
Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) վարկ մինչև	16.7 մլն եվրո
ԵՄ ՀՆԾ ներդրումային դրամաշնորհ մինչև	15 միլիոն եվրո (3 միլիոնը ենթակա չէ առուդիտի)

Ծրագրի հայեցակարգը ներառում է նաև հայկական կողմի ներդրումը Ծրագրի ծախսերին: Քանի որ ԱԱՀ-ի վճարումները և այլ պետական վճարները չեն ֆինանսավորվում Ֆինանսական համագործակցության հիմնադրամներից, բոլոր անհրաժեշտ վճարները՝ ԱԱՀ-ն, մաքսատուրքերը և այլ պետական վճարներ ՀՀ Կառավարությունը պետք է իր վրա կրի: Սա ներառում է ոչ միայն ԱԱՀ-ի վճարումները ներդրումային միջոցներից, այլ նաեւ ԱԱՀ-ի վճարումները հարակից միջոցներից:

ՀՏԶՀ-ի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցի փողոց 31:

Գործարար միջավայր

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Դա հանգեցրեց հայկական շուկա արտարժույթի ներհոսքի ավելացմանը, ինչի հետևանքով հայկական դրամը զգալի արժևորվեց ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ:

Ղեկավարությունը չի ակնկալում, որ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ հայկական դրամի հետագա արժևորում կլինի: Այնուամենայնիվ, Ուկրաինայում շարունակվող հակամարտությունը կարող է հանգեցնել Հայաստան դեռևս ավելի մեծ արտարժույթի ներհոսքի, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ Ծրագրի իրականացման վրա:

Տվյալ հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում վերը նշվածի հնարավոր ազդեցությունը:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով: Համաձայն հաշվապահական հաշվառման այս սկզբունքի՝ դրամական մուտքերը ճանաչվում են ստացման պահին և ծախսերը ճանաչվում են վճարման պահին: Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են համաձայն 2013թ. դեկտեմբերի 27-ին կնքված և հետագայում փոփոխված Վարկային և Ծրագրի համաձայնագրի և 2015թ. հոկտեմբերի 28-ին կնքված և հետագայում փոփոխված համապատասխան Առանձնացված Համաձայնագրի համապատասխան պայմանների, ինչպես նաև ԵՄ ՀՆԾ ֆինանսական համաձայնագրի և ԵՆԲ ֆինանսական պայմանագրի համապատասխան դրույթների:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

ՀՀ դրամը հանդիսանում է Հայաստանի հանրապետության ազգային արժույթը: Ծրագրի հաշվապահական հաշվառման գրանցումների համար կիրառվում է Եվրոն: Այս հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Եվրոյով:

Կառավարության համաֆինանսավորման գումարները և դրա հաշվին կատարված վճարումները, որոնք տրվում են ՀՀ դրամով, փոխարկվում են Եվրոյի՝ Հայաստանի հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանված գործարքի օրվա փոխարժեքով:

Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված բանկային հաշիվները, կանխավճարները և կրեդիտորական պարտքերը վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը, որը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 Եվրոն կազմում է 447.9 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 Եվրոն կազմել է 420.06 ՀՀ դրամ):

2.3 Ֆինանսավորում

Ծրագրի հաշվի ֆինասավորումը ճանաչվում և ներառվում է հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվություններում միայն այն ժամանակ, երբ վարկային հաշվից գումարները փոխանցվում են Հայաստանի հանրապետության Պետական Գանձապետարանում բացված Ծրագրի հաշվին: Դրամական միջոցների համալրումները վճարվում են KfW-ի կողմից եվրոյով՝ համաձայն տրանշերով/մասնաբաժիններով վճարման սկզբունքի: Համալրումներն իրականացվում են տրանշերով՝ կանխավճարով հաշվարկված գումարի չափով՝ մանրամասնելով առանձին ծրագրի ենթահաշիվներից առաջիկա վեց ամիսների համար ֆինանսավորվող միջոցների համար նախատեսված ծախսերը: Ցանկացած ծրագրի հաշվի համալրման դիմում կարող է կատարվել այն ժամանակ, երբ համալրման ավելի քան 70%-ը ծախսվի և բոլոր նախկին տրանշեներն ամբողջությամբ ծախսվեն:

ԵՆԲ-ի վճարումները կկատարվեն ԵՆԲ-ի ֆինանսավորման պայմանագրի պայմաններին և ԵՆԲ-ի ընդհանուր կանոններին համապատասխան:

ՀՆԾ-ի վճարումները կկատարվեն KfW-ի կողմից ծրագրի համապատասխան հաշվին կանխատեսված գումարի չափով դրամական միջոցների ստացման դիմումներին համապատասխան:

2.4 Ծախսեր

Ծրագրային ծախսերը ճանաչվում են որպես այդպիսին և ներկայացվում են հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվություններում, երբ կատարվում են վճարումներ մատակարարներին՝ ապրանքների, աշխատանքների և/կամ ծառայությունների գծով: Վճարումները կատարվում են Ծրագրի և Կառավարության համաֆինանսավորման հաշիվներից: Բացի այդ, Ծրագրի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մնացորդներն առանձին բացահայտված են ծանոթագրություն 6-ում:

3 Կանխիկ միջոցներ

Ծրագրի շրջանակներում 3 առանձին հաշիվ է բացվել ՀՀ Պետական Գանձապետարանում (Ծրագրի հաշիվ)՝ KfW վարկից ստացված ֆինանսավորման, ԵՄ-ՀՆԾ դրամաշնորհի և ԵՆԲ-ի համար: KfW-ի հաշիվները և ԵՄ-ՀՆԾ միջոցները պահվում են ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ՋԿ անունով: ԵՆԲ միջոցների հաշիվները պահվում են ՀՀ Ֆինանսների նախարարության անունով: Այս ծրագրային հաշիվներն օգտագործվում են բացառապես վճարային գործարքների համար և կուղղորդեն միջոցներն ծրագրի անհատական հաշիվներին՝ Առանձնացված համաձայնագրի դրույթներին համապատասխան: Հայաստանի հանրապետության Պետական Գանձապետարանում բացվել են մեկ գանձապետական հաշվի երեք ենթահաշիվներ (ծրագրի անհատական հաշիվներ), որոնք պահվում են ՀՏՋՀ անունով: Յուրաքանչյուր ենթահաշիվ պահվում է բացառապես վճարման համար նախատեսված միջոցների և ծառայությունների համար, որոնք նախատեսված են վարկային հիմունքներով ծրագրի բաղադրիչի համար:

Եվրո	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Ծրագրի հաշիվ (KfW վարկային միջոցներ)	3,798,648	4,993,535
Ծրագրի հաշիվ (ԵՄ-ՀՆԾ միջոցներ)	190,934	216,776
Ծրագրի անհատական հաշիվ (KfW վարկային միջոցներ)	191,694	66,179
Ծրագրի անհատական հաշիվ (ԵՄ-ՀՆԾ միջոցներ)	1	1
Ծրագրի անհատական հաշիվ (ԵՆԲ միջոցներ)	-	1,228,248
	4,181,277	6,504,739

Այս բոլոր հաշիվները պետք է պահվեն եվրոյով և որևէ տոկոս կամ բանկային վճարներ չպետք է հաշվարկվեն:

4 Ստացված դրամական միջոցներ

Եվրո

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցների համալրումներ KfW-ից/ծրագրի հաշվին	4,455,510	19,936,237
Դրամական միջոցների համալրումներ KfW-ից/ուղղակի վճար	-	56,200
Դրամական միջոցների համալրումներ/(դրամական միջոցների ետ վերադարձ) ԵՄ-ՀՆԾ-ից, զուտ/ծրագրի հաշվին	-	482,647
Դրամական միջոցների համալրումներ ԵՆԲ-ից/ծրագրի հաշվին	-	8,600,000
Կառավարության համաֆինանսավորում /(վերադարձված դրամական միջոցներ), զուտ	1,879,803	5,172,161
Ընդամենը ստացված/(վերադարձված դրամական միջոցներ), զուտ	6,335,313	34,247,245

5 Վճարված դրամական միջոցներ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար վճարված դրամական միջոցներն ըստ պայմանագրային գործընկերների ներկայացված են ստորև.

Եվրո

Պայմանագրային գործընկեր	Պայմանագրի համար	Վճարումներ պայմանագրային գործընկերներին				Ընդամենը
		KfW	ՀՆԾ	ԵՆԲ	Համաֆինանսավորում	
ԳԻՏԵՔ-ԻԳԻՓ ՋԻԷՄԲԻԷՅՋ-Շիրակ	BMZ N 2013 66343 (LOT 1)	41,929	-	378,588	84,113	504,630
Կոնսորցիում «Բլեսկ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղ / «Եղվարդշին» ԲԲԸ	BMZ N 2013 66 343 CIP II-P3-AWSC LOT 3/1	1,578,928	-	83,310	802,786	2,465,024
«Դորոժնիկ» ՍՊԸ/ «Հիմնաքար» ՓԲԸ ՀՁ	BMZ N 2013 66 343 (LOT 1) CIP II-P3-SH	1,968,169	-	187,624	508,030	2,663,823
«Դորոժնիկ» ՍՊԸ	BMZ N 2013 66 343 (LOT 2), CIP II-P3-L/NA	1,444,854	-	374,650	327,051	2,146,555
«SAFAGE SAS և ՋԻՆՋ ՍՊԸ կոնսորցիում»	BMZ N 2013 66 343 (LOT 3)	161,426	-	86,916	49,563	297,905
Է.Ս ԱՐ ՓԻ Շնայդդեր և Փարթներ Ինջենյը Քոնսալթ ՋԻԷՄԲԻԷՅՋ	BMZ N 2013 66343 SH/L/NA (LOT 2)	329,576	-	117,160	89,109	535,845
«ԳԻՏԵՔ-ԻԳԻՓ ՋԻԷՄԲԻԷՅՋ և Է.ՅՋՋԻԷՍԷՆ ՍՊԸ» կոնսորցիում	BMZ N 2013 66 343 (LOT 4)	-	25,842	-	5,136	30,978
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ/»ԱՅՅՈՒԲԻ Է.ՆՋԻՆԻԸՐԻՆԳ» ՍՊԸ	BMZ N 2013 66 343	-	-	-	1,611	1,611
		5,524,882	25,842	1,228,248	1,867,399	8,646,371

6 Ծրագրի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մնացորդները

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 2.1-ում, ՀՏՋՀ-ի քաղաքականությունն է ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստել հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքին համապատասխան: Այնուամենայնիվ, ՀՏՋՀ-ն ներկայացրել է նաև կանխավճարի և կրեդիտորական պարտքերի մնացորդների առանձին հաշիվներ, որոնք նախատեսված չեն հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով առավել մանրամասն տեղեկատվության ներկայացման համար:

Կանխավճարի մնացորդները ներկայացված են ստորև՝

Եվրո

Պայմանագրային գործընկեր	Պայմանագրի համար	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«ԳԻՏԵՔ-ԻԳԻՓ ՋԻԷՄԲԻԷՅՋ և ԷՅՋՋԻԷՄԷՆ ՍՊԸ» կոնսորցիում	BMZ N 2013 66 343 (LOT 4)	74,148	74,148
Կոնսորցիում «Բլեսկ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղ / «Եղվարդշին» ԲԲԸ	BMZ N 2013 66 343 CIP II-P3-AWSC LOT 3/1	407,842	945,080
«Դորոժնիկ» ՍՊԸ/ «Հիմնաքար» ՓԲԸ ՀՁ	BMZ N 2013 66 343 (LOT 1) CIP II-P3-SH	772,571	1,309,358
		1,254,561	2,328,586

Կրեդիտորական պարտքերի մնացորդները ներկայացված են ստորև՝

Եվրո

Պայմանագրային գործընկեր	Պայմանագրի համար	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կոնսորցիում «Բլեսկ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղ / «Եղվարդշին» ԲԲԸ	BMZ N 2013 66 343 CIP II-P3-AWSC LOT 3/1	442,050	412,879
«Դորոժնիկ» ՍՊԸ/ »Հիմնաքար» ՓԲԸ ՀՁ	BMZ N 2013 66 343 (LOT 1) CIP II-P3-SH	465,500	455,262
«Դորոժնիկ» ՍՊԸ	BMZ N 2013 66 343 (LOT 2), CIP II-P3-L/NA	394,070	389,884
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ	BMZ N 2013 66 343	8,200	-
		1,309,820	1,258,025